



ԻՎԱԳԱՄԵՌԻԿ ՓՈՒՈՒՄՆ ՅԱՍԵԱՅՍ

Մ Կ Ր Տ Ջ Ի Պ Ա Ր Ո Ն Ե Ա Ն Մ Ր Ջ Ա Պ Ա Ր Ո Ն Ե Ա Ն Յ

ՀԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ա Ս Ա Տ Ե Ա Լ

Ի ԽԱԶԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԷ ԶԱՐԻՖԵԱՆ

Սրտառուչ եւ ցաւագին է առաջիկայ տեսարանս, ուրանօր բազմութիւն սգաւորաց արտասուելից աչօք շուրջ պատած են այս դագաղը, յորում ամփոփեալ կայ մարմին գորովագութ պատանեկի, որ միակ պարծանք էր ծնողին իւրոյ եւ յոյս էր բարերարի՝ հօր հայազգի մանկանց եւ ժառանգորդ առաքինութեանց նորա (1):

Տեսանեմք ահա պատանին այն այսօր ի դագաղիս, որ երբ պատրաստուած էր պակկիլ օրինօք ամուսնութեան, անփարատելի տրամութեան մէջ թողլով իւր ծնողքը, ազգակիցքը եւ բարեկամքը, անցանել աճապարէ ի՞նչ ամաց հասակի իւրում իվշտաց իհանգիստ եւ յառժամանակեայ կենացս ի մշտնջենաւորն:

Այլ որովհետեւ ամենագիտին Աստուծոյ է այս անդառնալի վճիռը, ուստի մնայ մեզ

միայն, նորա սուրբ կամացը հնազանդելով, ուղեւորել արտասուօք այս երկնագնաց ճանապարհորդը մինչեւ գերեզմանին դուռը:

Սուրբ Առաքեալն Պօղոս «եթէ, ասէ, կեամք՝ տեառն կեամք, եթէ մեռանիմք տեառն մեռանիմք. եւ արդ եթէ կեամք եւ եթէ մեռանիմք՝ տեառն եմք», այս ասելով կեանքը ախորժելի կերեւցընէ մեզ, եւ մեռանիլը ոչ երկիւղալի. վասն զի եթէ ապրիմք եւ եթէ մեռանիմք, տեառն եմք. եւ այսու կուսուցանէ Աստուծոյ սուրբ կամացը յանձնել մեր եւ կեալը եւ մեռանիլը:

Բայց վշտացեալ եւ տրտմեալ անձն կարող է արդեօք հաւաքել այս փրկարար միաքերը: Նա, առաջի աչաց ունելով իւր սրտի սիրելին անշնչացած, ով Աստուած, կասէ, ինչո՞ւ մեր կեանքը կըխլես մեզնէ. ինչո՞ւ մեր ուրախութիւնը խուզ եւ խնդումը իտրամութիւն կըդարձուցանես յանկարծակի. ինչո՞ւ մահու հրեշտակին կթոյլատրես՝ կըա-

(1) Հանգուցեալ ազնուարարոյ երիտասարդը բոռն էր Խալիպեան Յարութին Աղային:

րել հաղիւ բացուած ծաղիկը, որոյ կորուստը այնչափ զգալի է մեզ՝ որչափ քաղցր էր անուշահոտութիւնը:

Այսպէս ահա կասէ վշտացեալ հոգին, բարեպաշտօն ունկնդիրք: Բայց, եթէ հայրն հաւատացելոց չկրցաւ չարտասուել Սառայի համար, եթէ Յակոբայ որդիքը արտասուեցին բարերար Յովսեփայ համար, եթէ Աստուածահայր մարգարէն Դաւիթ ողբաց Աբիսողոմի վերայ, եթէ ինքն Փրկիչն մեր՝ «Ղազարոս բարեկամն մեր ննջեաց» ասելով՝ արտասուեաց, ապա ուրեմն նուիրենք եւ մեք քանի մի բոպէ իսուգ, իբրեւ վերջին հրաժարական ողջոյն իգնաւն հանգուցելոյս յաւիտենական ճանապարհն:

Ամենայն քրիստոնեայ եթէ ապրի՝ Աստուծոյ կապրի, եւ եթէ մեռանի՝ Աստուծոյ կրմեռանի, այսպէս կասէ աստուածային բանն. ուստի եւ սուրբ եկեղեցիս որ հանգուցեալ հոգիքը յերանաւէտ կեանս կուղեւորէ իւր սպասաւորաց ազաչանօքը, եւ մարմինն երկիւղածութեամբ կթաղէ իհող տապանի, յուսալով յարութեան յաւուրն յետնում, այսու մեկնութիւն կուտայ աստուածային բանիս՝ թէ քրիստոնեայն ոչ մեռանի, վասն զի Աստուծոյ մեռանէն նոյն է՝ Աստուծոյ հետ ապրին:

Ուրեմն եւ դուք, տրամազգեաց ծնողք եւ

սգաւոր ազգակիցք եւ բարեկամք հանգուցելոյս, մի վշտանայք եւ արտասուք մի թափէք աւելի, վասն զի վախճանեալս ձեր զարգարուած էր քրիստոնէութեամբ. անկեղծութիւն եւ բարեացակամութիւն սորա սիրելի կացոյց զինքն ամենեցուն. եւ այս աստուածային տաճարս, այս դասքս եկեղեցականաց, այս բազմութիւնս սգաւորաց ինքնին վկայեն թէ որչափ արժանի էր սա սիրոյ եւ շնորհակալութեան, եւ երկինքը իւր գիրկը ընդունելով այսպիսի առաքինութիւն, շնորհ կուտայ մխիթարութեան ծնողացդ եւ բարեկամացդ: Բարեպաշտ էր սա եւ բարեպաշտութեամբ հանգեալ, ուստի եւ վերջին դատաստանի օրն՝ լսելով թագաւորին ձայնը թէ «եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն իսկզբանէ աշխարհի», արդարագատ եւ անաչառ դատաւորին Աթոռոյ առջեւը երթալով՝ պիտի ստանայ վարձը ըստ բարի գործոց իւրոց:

Ո՛վ փրկիչ մարգասէր Աստուած, ընկնլ զազաչանս մեր վասն հոգւոյ հանգուցեալ Մկրտիչ պատանւոյս քո, եւ հանգն զսա ի խորանսգ արգարոց քոց. սփոփեան եւ մխիթարեա զտրտմեալ մնացորդս սորա, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ յաւիտեանս. Ամէն:

